

ՀՏԴ 81-2

Շ. Վ. Տեր-Ադամյան
ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԱՊԱՌՆԻ ՁԵՎԵՐԻ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԵՐԵՆՈՒՄ

*Բանալի բառեր*¹ ապառնի ձևեր, առաջին ապառնի, երկրորդ ապառնի, ապառնի ոլորտ, հարաբերական ժամանակային ձև, բացարձակ ժամանակային ձև:

Ключевые слова: формы будущего времени, первый футурум, второй футурум, сфера будущего, абсолютная временная форма, относительная временная форма.

Keywords: The forms of the future tense, Future I (Futurum I), Future II (Futurum II), the sphere of the future, an absolute tense form, referential tense form.

Սույն հոդվածում արծարծվում են գերմաներենում ապառնի ոլորտին վերաբերող խնդիրներ: Գերմաներենում ապառնի իմաստային դաշտը ներկայացված է ժամանակային երկու ձևերով՝ առաջին և երկրորդ ապառնիներով: Առաջին ապառնին հանդես է գալիս որպես բացարձակ, իսկ երկրորդ ապառնին՝ որպես հարաբերական ժամանակային ձև: Հոդվածում փորձ է արվում նաև պատասխանել այնպիսի հարցերի, որոնք վերաբերում են սույն ձևերի ժամանակային և եղանակային բնույթին:

Սույն հոդվածում ուսումնասիրության են ենթարկվում ապառնի ձևերը գերմաներենում, դրանց դրսևորած տիպաբանական առանձնահատկությունները, որոնք ըստ անհրաժեշտության ներկայացվում են հայերենի զուգադրմամբ: Վերջին շրջանում սույն ժամանակային ձևերը քերականագիտական գրականության մեջ բազմաբնույթ քննարկումների առիթ են հանդիսանում: Ապառնիի շուրջ գոյություն ունեցող տարակարծությունները պայմանավորված են ապառնիի երկակի բնույթով՝ ժամանակային և եղանակային: Ընդ որում, մի դեպքում ժխտվում է ապառնիի ժամանակային ընկալումը՝ կարևորելով սուսկ եղանակային բնույթը, մյուս դեպքում ժխտվում է եղանակային բնույթը՝ առաջնային համարելով ապառնիի ժամանակային իմաստը: Բացի այդ, առաջին և երկրորդ ապառնի ձևերը գերմաներենում տեղակայվելով միևնույն ապառնի ոլորտում, նշում են տարբեր ժամանակային պլանների պատկանելություն: Հիմք ընդունե-

լով Յու. Գաբրիելյանի գերմաներենի ժամանակային ձևերի դասակարգումը՝ ապառնի ձևերի համար ներկայացնում ենք դասակարգման հետևյալ պատկերը. առաջին ապառնին հանդես է գալիս որպես բացարձակ ժամանակային պլանի ձև՝ ըստ հաջորդող դրվածքի, մինչդեռ երկրորդ ապառնին պատկանում է հարաբերական ժամանակային պլանին՝ ըստ նախորդող դրվածքի (2, 59-61): Ուստի, սույն հոդվածի նպատակն է առավել համակողմանի քննության ենթարկել գերմաներենում ապառնի ձևերի տեղակայման սկզբունքները, դրանց տիպաբանական առանձնահատկությունները, ցույց տալ սույն ձևերի ժամանակային և եղանակային բնույթը, բացահայտել դրանց իրացման հնարավորությունները: Ներկայացվող թեման առավել արդիական է և լեզվաբանական ուսումնասիրությունների տեսակետից առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև այն առումով, որ քննության են ենթարկվում գերմաներենի՝ մեր կողմից ուսումնասիրվող լեզվական փաստերը՝ հայերենի լեզվական փաստերի զուգադրմամբ, ինչը հնարավորություն է տալիս բացահայտելու մի շարք ընդհանրություններ ու տարբերություններ զուգադրվող լեզուների միջև՝ դրանով իսկ լուծելով լեզվաբանական ուսումնասիրությունների տեսակետից կարևորություն ներկայացնող առանցքային հարցերից մեկը: Ապառնի ժամանակը և՛ գերմաներենում, և՛ հայերենում ապառնի իմաստի հաղորդման հարացուցային հիմնական ժամանակային ձևն է, որը յուրաքանչյուր չեզոք համատեքստում կամ համատեքստից դուրս արտահայտում է խոսքի պահից հետո արտահայտված գործողության, եղելության իմաստ: Ի տարբերություն, սակայն, իմաստային դաշտում տեղակայված ներկա և անցյալ ժամանակային ձևերի՝ այս ձևերի արտահայտած գործողությունը երբեք հասանելի և տեսանելի չէ, այն կարող է ընկալվել որպես զուտ մտադրություն, նախատեսված, սպասված իրողություն կամ եղելություն: Գերմաներենում, ինչպես նաև հայերենում ապառնի եզրում տեղակայված ձևերը նշում են բովանդակային պլանում ժամանակային և եղանակային իմաստներ: Ապառնին միանշանակ ժամանակային է համարվում, օրինակ՝ *So werde ich um den Tageslohn arbeiten*. Մինչդեռ հաջորդ օրինակում ապառնի ժամանակով արտահայտված գործողությունը հանդես է գալիս միանշանակ որպես եղանակային. *Peter wird inzwischen längst in Köln sein*. Այս փաստը, սակայն, քերականության մեջ տարբեր կերպ է մեկնաբանվում: Գ. Շելբիգը և Յ. Բուշան գերմաներենի բայի համար ընդունում են ապառնիի երկու տարբերակներ. մի դեպքում դա ներկայում ենթադրվող գործողության իմաստի հաղորդումն է, մյուս դեպքում՝ ապառնի գործողության (5, 137): Ապառնիի համար այսպիսի տարբերակված գործառնություններից գատ, անհրաժեշտ է տալ մի միասնական նշանակության սահմանում, որը կներառեր երկու բաղադրիչները միաժամանակ՝ ժամանակային և եղանակային: Իրականում, ապառնի ձևերի բնութագրման երկու հնարավոր տարբերակներ կան: Կարելի է ժամանակային կամ եղանակային իմաստներից մեկը դիտարկել առաջնային: Համապատասխանաբար, այնպիսի նախադասություններում, ինչպես, օրինակ՝ *Das wird der*

Postbote sein. պետք է եղանակային նշանակությունը դիտարկել որպես ժամանակային հիմնական գործառնությունից ածանցված, որը նպաստում է ապառնի ձևերում կանխատեսման բնույթի դրսևորմանը, այսինքն՝ այն որպես ենթատեքստ նշում է, որ «ես նախապես ասում եմ, որ դա փոստային սուրհանդակն է»: Այսպես՝ ապառնի ձևի՝ զուտ ժամանակային կիրառությամբ այս արտահայտության իրավացիությունը պարզ կդառնա միայն խոսքի պահից հետո: Բայց հնարավոր է նաև հակառակ մոտեցումը, որ ապառնիի բնորոշման հարցում առաջնային իրացվի եղանակային տարրը ապառնի վերաբերություն նշող այնպիսի արտահայտություններում, ինչպես, օրինակ՝ *Sobald er das hört, wird er vor Wut platzen.* Այս դեպքում ապառնի ձևով գերմաներենում արտահայտվում է կանխատեսում, որը ներկայացվում է որպես ենթադրություն: Ապառնիի բնութագրման հարցում հենվելով Յու. Գաբրիելյանի տիպաբանական ուսումնասիրության արդյունքների վրա՝ ապառնիի համար ընդունում ենք «կանխադրությային» առաջին ապառնի սահմանումը, որի դեպքում տեղի է ունենում կրկնակի փոխանցում. առաջին դեպքում սահմանականի ոլորտից «կանխադրությային» կամ ենթադրական իմաստի ոլորտ, ինչպես՝ *Er wird zu Hause sein.*

Նա պետք է որ տանը լինի: Երկրորդ դեպքում՝ ժամանակային փոխանցում ներկայի ոլորտ, երբ առաջին ապառնիի տվյալ ձևը կարող է ներկայացվել երկու իմաստային բաղադրիչներով. կանխադրությո՝ և համընկնում խոսելու պահին (2, 59-61): Ապառնիի այսպիսի կիրառությունը կարող է հիմնավորվել ապառնի ժամանակային տարրերի միջոցով, որոնք առկա են յուրաքանչյուր ենթադրության մեջ, քանի որ տվյալ ենթադրության իրավացիությունը հաստատվում է միայն ապառնի որևէ ժամանակակետում: Ուստի, ապառնիի բնորոշման հարցում անհրաժեշտ ենք համարում ապառնի ձևերի համար գերմաներենում չտարբերակել երկու առանձին նշանակություններ՝ իրենց կիրառության տարբեր ոլորտներով, քանի որ միայն դրանց զուգահեռ իրացմամբ է պայմանավորվում տվյալ ժամանակային ձևի բնույթը, ներքին կառուցվածքը: Գերմաներենում ապառնիի՝ որպես գործողության հաղորդման ժամանակային ձևի ընտրությունը, կարելի է ասել, կախված չէ գործողության՝ ապառնի ժամանակային ոլորտում տեղակայման հանգամանքից, այլ անմիջապես խոսողի վերաբերմունքից արտահայտության նկատմամբ: Այն գործածվում է ոչ միայն այն պատճառով, որ գործողության կատարումը տեղի է ունենում խոսքի պահից հետո, այլև որ խոսողը ապագայի գործողության նկատմամբ սպասման մեջ է, ենթադրում կամ կանխատեսում է տվյալ գործողության կատարումը՝ հակադրվելով ներկային և եղանակավորող բայերին, որոնց հետ այն հանդես է գալիս այս իմաստային դաշտում: Ապառնի ձևերը նախընտրելի են այս դաշտում այն դեպքում, երբ ապառնի գործողության նկատմամբ կանխատեսումը, ենթադրությունը, սպասումը բխում է ներկայից: Ընդ որում, սույն ձևերի ընդհանուր իմաստի բնորոշման հարցում կարևոր են երկու առանձին իմաստային բաղադրիչներ. գործողության բացառումը խոսելու պահից և դրա հանդես գալը խոսելու պա-

հից հետո: Գործառույթի տեսակետից, սակայն, ապառնի ձևերը օժտված են տիպաբանական մի շարք յուրահատկություններով, որոնք շատ դեպքերում համապատասխան արտացոլում չեն գտնում հայերենում: Հայերենում ապառնի ժամանակը չի հարուցում բարդություններ իմաստի և գործառույթի սահմանման հարցում: Հայերենը, տիրապետելով հարուստ եղանակային ձևերի բայական համակարգի, լիովին բաշխում է եղանակային իմաստները տվյալ ձևերի միջև, մինչդեռ գերմաներենում ենթադրական, հարկադրական, եղանակների իմաստները մասամբ արտահայտվում են ապառնի ձևերի միջոցով: Մասամբ, որովհետև, լեզվում առկա են նաև մի շարք այլ լեզվական միջոցներ, ինչպես, օրինակ, եղանակավորող բայերը, որոնք իրականացնում են տվյալ գործառույթը: Քերականական ժամանակը, սակայն, չի արտացոլում ժամանակային այդպիսի տարբերություններ: Ժամանակային տարածվածությունը լեզվում արտահայտվում է ժամանակային մակբայներով: Հայ քերականներն իրավամբ նշում են, որ սահմանական եղանակի ապառնի ձևերն ամենաքիչ գործածականներից են: Դա բացատրվում է նրանով, որ ապառնի իմաստ է արտահայտվում նաև ենթադրական և հարկադրական եղանակային ձևերով: Գերմաներենն այս ոլորտում տեղակայում է երկու ապառնի ձևեր, որոնք իրենց արտահայտած ժամանակային իմաստով խիստ իրարամերժ մեկնաբանությունների առիթ են տալիս: Երկրորդ ապառնիով գերմաներենում արտահայտվում է անցյալի գործողության, եղելության նկատմամբ ենթադրություն, ցանկություն, մտադրություն, այսինքն՝ այն բոլոր իմաստային երկրորդական դրսևորումները, որոնք բացահայտվեցին առաջին ապառնիի քննությամբ: Այն տարբերությամբ, որ այս ձևերի նշած իմաստները վերցվում են անցյալի հարաբերությամբ: Երկրորդ ապառնիով հաղորդվող գործողությունների, եղելությունների համար կարելի է տարբերակել հետևյալ իմաստային տարրերը.

- ենթադրվող գործողության արտահայտում անցյալի հարաբերությամբ,
- անցյալի ենթադրվող գործողության դրսևորում հետևանքային նշանակությամբ,
- ապառնիի նկատմամբ վերցված կատարված գործողության հաղորդում:

Երկրորդ ապառնի ձևերի ենթադրության իմաստային տարրը միանգամայն բացատրելի է ապառնիի ձևերի ենթադրության եղանակային տարրերի առկայությամբ: Այն գործածական է այն դեպքերում, երբ հաղորդվում է սպասված գործողության վերաբերյալ որպես հաստատում, ենթադրություն, կանխատեսում: Մինչդեռ հետևանքային նշանակությունը բխում է երկրորդ ապառնիի կազմում Infinitiv Perfekt-ի նշանակությունից, որտեղ օժանդակ բայ + Partizip II կազմությունը նշում է հետևանքային նշանակություն, ինչպես, օրինակ՝ *Peter wird eingeschlafen sein*. Որպես այս նախադասության հետևանք կամ հետվիճակ՝ ենթադրվում է նաև, որ քնելու էր և քնած կլինի նաև մինչև այն պահը, որը հաջորդում է գործողության կատարմանը՝ հանդիսանալով տվյալ գործողության նկատմամբ ապառնի ժամանակ: Կատարված, ավարտված գործողու-

թյան իմաստն այստեղ նույնպես ածանցվում է երկրորդ ապառնիի Perfekt կազմությունից, ինչպես՝ *Bald werden wir es geschafft haben*. Գերմաներենում երկրորդ ապառնին՝ որպես ժամանակային ձև, խիստ սահմանափակ գործածություն ունի: Այն շատ դեպքերում փոխարինելի է Perfekt ժամանակային ձևերով, երբ հանդես է գալիս ենթադրության կամ հետևանքային նշանակությամբ անցյալի հարաբերությամբ, ինչպես՝ *Wenn du morgen früh ins Büro kommst, bin ich wahrscheinlich schon losgefahren*. Այսպիսի արտահայտությունները հիմնականում ունեն կանխատեսման բնույթ, որոնք իրականում կարող են ժամանակի ընթացքում հաստատվել կամ ոչ: Գերմաներենը, ապառնի ոլորտում տեղակայելով երկու ժամանակային ձև՝ առաջին և երկրորդ ապառնի ձևերը, այս հասկանիչով հակադրվում է հայերենին: Ժամանակակից հայերենը ապառնի ոլորտում տեղակայում է մի ապառնի ժամանակաձև: Որոշ լեզվաբաններ ընդունում են հայերենի բայի համար նաև անցյալի ապառնի ժամանակաձևը: Ժամանակակից հայերենում այս ձևերի կարգավիճակն այլևս քննարկման ենթակա չէ այն առումով, որ այս ձևերը վերջնականապես դուրս են եկել բայական հարացույցից և չեն ներառվում բայի ժամանակային համակարգում:

Այսպիսով, քննության ենթարկելով ապառնիի իմաստի իրացման հնարավորությունները գերմաներենում, սույն իմաստի իրացման քերականական ձևերը, պարզ է դառնում, որ սույն ձևերի բնութագրման համար առավել մեծ կարևորություն են ներկայացնում այնպիսի բաղադրիչներ, ինչպես գործողության բացառումը խոսքի պահից և դրա հանդես գալը խոսքի պահից հետո, որոնք բոլոր դեպքերում հանդես են գալիս որպես կարևոր չափանիշներ: Սույն հոդվածի շրջանակներում փորձ արվեց պատասխանել այնպիսի կարևոր հարցերի, որոնք անմիջականորեն վերաբերում են ապառնիի իմաստային և գործառությանն առանձնահատկություններին՝ պայմանավորված սույն ձևերի ժամանակային և եղանակային բնույթով: Ապառնիի դեպքում ժամանակի և եղանակի միջև սահմանը հասնում է նվազագույնի: Դա հաստատվում է ապառնի ձևերում եղանակային տարրերի առկայությամբ:

Սույն հոդվածը գործնական կիրառության լայն հնարավորություն ունի: Այսպիսի հետազոտությունները կարող են մեծ նշանակություն ունենալ գերմաներենի գործնական ուսուցման, գերմաներեն և հայերեն լեզուների տիպաբանական դասընթացների, ինչպես նաև թարգմանաբանական խնդիրների պարզաբանման համար:

III. В. Тер-Адамян *Типологические особенности первого и второго* *футурума в немецком языке*

В статье обсуждаются вопросы о сфере будущего времени в немецком языке. Поле будущего времени в немецком языке предоставлено двум временным формам: первый и второй футурум. Первый футурум является

абсолютной, а второй футурум- относительной временной формой. В статье так же предпринимается попытка ответить на вопросы связанные с модальным и временным характером данных форм.

Sh. W. Ter-Adamyan
Typological Peculiarities of I and II Future Forms in the
German Language

The article aims at discussing the problems concerning the sphere of the future in the German language. The Future of the German language is presented with two forms: Future I (Futurum I) and Future II (Futurum II). It should be noted that Future I is considered to be an absolute form, whereas Future II is thi referential one. Within the frame of this article there has also been taken an attempt to answer the questions connected with modal and tense characteristics of these forms.

Գ ր ա կ ա ն ն լ թ յ ո լ ն

1. Գաբրիելյան Յու., Գերմաներեն լեզվի տիպաբանություն, Երևան, 2000,101 էջ:
2. Հովհաննիսյան Ա., Հայերենի և անգլերենի ժամանակային ձևերի զուգադրական վերլուծություն, Երևան, Արտագերս, 1999, 96:
3. Gabrieljan J. Deutsche Grammatik in Theorie und Praxis, Verlag der Universität Jerewan, Jerewan, 2008, 100 S.
4. Helbig G. & Buscha J. Deutsche Grammatik. Ein Handbuch für den Auslandsunterricht. 19. Aufl. Leipzig: Langenscheidt, 2001, 656 S..
5. Hentschel E., Weydt H. Handbuch der deutschen Grammatik, de Gruyter. Berlin, 2003, 524 S.

Տեղեկություններ հեղինակի մասին

Տեր-Ադամյան Շուշանիկ Վոլոդյայի - *հայցորդ, Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ, ֆրանսերեն, գերմաներեն լեզուների և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս, E-mail: schuschan.teradamyana@gmail.com*

Տրվել է խմբագրություն 12.06.2013.